ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/170

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11391-2020 գրությամբ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 29.07.2020թ. թիվ Ե/40/1317-20 գրության հիման վրա 30.07.2020թ. թիվ 26/26-1/11391-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/170 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:40-ին և 20.08.2020թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2020թ. թիվ Ե/40/1317-20 գրությամբ հայտնել է, որ լաբորատոր, չափիչ հսկիչ, ստուգիչ սարքերի ձեռքբերման նպատակով ս.թ. հուլիսի 7-ին հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ են ներկայացրել թվով տասնմեկ կազմակերպություններ, այդ թվում՝ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը:

Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանի ներկայացված հայտում առկա են որոշակի անհամապատասխանություններ:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Սակայն սահմանված ժամկետում Մասնակիցը չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը՝ կից ներկայացնում է համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/170 ընթացակարգի շրջանակներում 07.08.2020թ. ժամը 10:40-ին և 20.08.2020թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11391-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 29.07.2020թ. թիվ Ե/40/1317-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ

հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, թիվ 5-րդ չափաբաժնով տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք»:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ Մասնակցի կողմից շտկում չի կատարվել, որի հիման վրա, Կարգի 42-րդ կետի համաձայն, մերժվել է վերջինիս հայտը:

Ուսումնասիրելով ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 5-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով ընթացակարգով իրականացված գործողությունները՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 22.07.2020թ. ծանուցել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այնուհետև՝ 24.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ Մասնակցի կողմից անհամապատասխանությունը չշտկելու հիմնավորմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ մերժել է վերջինիս հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով «Միլիոհմմետր» գնման առարկայի համար սահմանվել է «МИКО-8МА կամ համարժեքը»:

Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում, որ ***<u>Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):</u>***

Ընդ որում՝ ՄԱՍ 1-ի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ ***ապրանքի տեխնիկական բնութագրերը***, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ***ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը***, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Այսպիսով՝ տվյալ դեպքում Մասնակիցն Ընթացակագի 5-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի համար հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշել է «МИКО-8МА կամ համարժեքը», ինչը հնարավորություն չի ընձեռում գնահատող հանձնաժողովին Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գնահատելու Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանի կողմից առաջարկվող ապրանքի համապատասխանությունը հրավերի պահանջներին. հարկ է նշել նաև, որ բավարար գնահատվելու պայմաններում կնքվելիք պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտի թիվ 1.1 հավելվածով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, ուստի անհրաժեշտ էր՝ Մասնակցի կողմից նշվեր կոնկրետ առաջարկվող ապրանքը, որի պայմաններում հնարավոր կլիներ գնահատել ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե*** սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում ***մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար***: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանվում է, որ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ***խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանը ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/20 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ 22.07.2020թ. ծանուցվելով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ՝ Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ առկա են Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2020թ. թիվ 26/26-1/11391-2020 գրությամբ Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Վոլոդյա Նիկողոսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**